



Ի՞նչ է ցույց տալիս հորիզոնական գծանշման դեղին հոծ գիծը:



1. Այն տեղը, որտեղ արգելվում է տրանսպորտային միջոցների կանգառը եւ կայանումը:
2. Այն տեղը, որտեղ թույլատրվում է կանգառ կատարել՝ ուղևորներ իջեցնելու կամ տրանսպորտային միջոցը բեռնաթափելու համար:
3. Այն տեղը, որտեղ արգելվում է տրանսպորտային միջոցների կայանումը:

Պատ.՝ 1

Թույլատրվո՞ւմ է արդյոք վարորդին հատել տրանսպորտային միջոցների կայանման տեղերի սահմանները նշող գծանշման հոծ գիծը:



1. Արգելվում է:
2. Թույլատրվում է:

Պատ.՝ 2


Սլաքներով նշված ո՞ր ուղղություններով է թույլատրվում երթևեկությունը:



1. Միայն ուղիղ:
2. Դեպի ձախ և հակառակ ուղղությամբ:
3. Ուղիղ, դեպի ձախ և հակառակ ուղղությամբ:

Պատ.՝ 1


Ի՞նչ է ցույց տալիս այս գծանշումը:



1. Հետիոտնային անցում, որտեղ երթևեկությունը կարգավորվում է լուսացույցով:
2. Այն տեղը, որտեղ հեծանվային արահետը հատում է ճանապարհի երթևեկելի մասը:
3. Այն տեղը, որտեղ հետիոտնային արահետը հատում է ճանապարհի երթևեկելի մասը:

Պատ.՝ 2

Քանի՞ գոտի ունի ճանապարհը, որտեղ հանդիպակաց ուղղությունների տրանսպորտային հոսքերը բաժանվում են կրկնակի հոծ գծերով:



1. Երկու գոտի:
2. Երկու կամ երեք գոտի:
3. Երեք գոտի:
4. Չորս և ավելի գոտիներ:

Պատ.՝ 4

Ի՞նչ են նախազգուշացնում երթևեկելի մասի վրա գծանշված սլաքները:




1. Նախազգուշացնում են վարորդին ճանապարհի վտանգավոր հատվածին մոտենալու մասին:
2. Նախազգուշացնում են երթևեկության գոտու վերջին մոտենալու մասին:
3. Ցույց են տալիս ճանապարհի վտանգավոր շրջադարձի ուղղությունը:

Պատ.՝ 2

Խուճբ N 7 Ճանապարհային գծանշում, կանգառ, կայանում


Գծանշման այս գծերից ո՞րն է օգտագործվում դարձափոխային երթևեկությամբ գոտիները նշելու համար:



- 1-ին գիծը:
- 2-րդ գիծը:
- 3-րդ գիծը:
- 2-րդ և 3-րդ գծերը:
- 3-րդ և 4-րդ գծերը:

Պատ.՝ 2


Որտե՞ղ է գծվում կանգառը եւ կայանումն արգելող տեղերը նշող դեղին հոծ գիծը:



- Երթևեկելի մասի վրա:
- Երթևեկելի մասի եզրի մոտ:
- Երթևեկելի մասի եզրի մոտ կամ եզրաքարի վերին մակերեսին:
- Միայն եզրաքարի վերին մակերեսին:

Պատ.՝ 3

Ճանապարհային նշաններից որի՞ հետ կարող է կիրառվել դեղին գույնի ընդհատվող գծանշումը:



- «Կանգառն արգելվում է»:
- «Կայանելն արգելվում է»:
- «Կայանելն արգելվում է ամսվա կենտ օրերին»:

Պատ.՝ 2

Ո՞ր տրանսպորտային միջոցներին է թույլատրվում երթևեկել երթևեկելի մասի աջ գոտիով:



- Բոլոր մեխանիկական տրանսպորտային միջոցներին:
- Ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցներին և տաքսիներին:
- Միայն հեծանիվներին:
- Միայն ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցներին:

Պատ.՝ 4


Այս ճանապարհային գծանշումն ունի հետևյալ նշանակությունը:



- Ցույց է տալիս մայթամերձ կայանման տեղերը, որտեղ նշված են մեխանիկական տրանսպորտային միջոցների կանգնեցման ձևերը:
- Ցույց է տալիս այն տեղերը, որտեղ արգելվում է մեխանիկական տրանսպորտային միջոցների կանգառը:
- Ցույց է տալիս ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների կանգառի կետերը և տաքսիների կայանման վայրերը:

Պատ.՝ 3


Այս հորիզոնական ճանապարհային գծանշումը ցույց է տալիս՝



- Երթևեկելի մասի նեղացում, որտեղ նվազում է երթևեկության գոտիների քանակը տվյալ ուղղությամբ:
- Այն տեղը, որտեղ վարորդը պետք է անհրաժեշտության դեպքում կանգ առնի՝ հատվող ճանապարհով երթևեկող տրանսպորտային միջոցներին ճանապարհը զիջելու համար:
- Ստեղծում կանգառն արգելված տեղին:

Պատ.՝ 2

Թույլատրվում է արդյոք մուտք գործել սպիտակ լայն գծերով գծանշված ուղղորդ կղզյակ:



1. Թույլատրվում է միայն կանգառ կատարելու համար:
2. Թույլատրվում է հետընթացի ժամանակ:
3. Արգելվում է:

Պատ.՝ 3

Ինչպե՞ս պետք է վարվի վարորդը՝ մոտենալով խաչմերուկին՝ «Կանգ - գիծ» գծանշման և լուսացույցի կանաչ ազդանշանի պայմաններում:

1. Կանգ առնի «Կանգ-գծի» մոտ, որից հետո վերսկսի երթևեկությունը:
2. Շարունակի երթևեկությունը խաչմերուկով՝ առանց կանգառի:

Պատ.՝ 2


Ի՞նչ է ցույց տալիս այս գծանշումը:



1. Հետիոտնային անցում:
2. Այն տեղը, որտեղ հեծանվային արահետը հատում է Ճանապարհի երթևեկելի մասը:
3. Անասուններ քշելու համար նախատեսված տեղը:

Պատ.՝ 2


Վարորդը որտե՞ղ պետք է կանգնեցնի տրանսպորտային միջոցն այս գծանշման առկայության դեպքում:



1. Գծանշման մոտ:
2. Գծանշման վրա:
3. Գծանշումից ոչ պակաս, քան 5 մ հեռավորության վրա:

Պատ.՝ 1

Ի՞նչ է նշանակում այս գծանշումը:



1. Ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների համար նախատեսված երթևեկության գոտի:
2. Հատուկ նշանակության ավտոմոբիլների համար նախատեսված երթևեկության գոտի:
3. Ցույց է տալիս երթևեկության այն գոտիների սահմանները, որտեղ իրականացվում է դարձափոխային կարգավորում:

Պատ.՝ 3

Թույլատրվում է արդյոք նշված վայրում հետադարձ կատարել:



1. Թույլատրվում է:
2. Արգելվում է:

Պատ.՝ 1

Թույլատրվում է արդյոք տվյալ գծանշման առկայության դեպքում զբոսաշրջության երթուղով երթևեկող ավտոբուսի վարորդին մուտք գործել «A» գծանշումով գոտի:



1. Թույլատրվում է:
2. Արգելվում է:

Պատ.՝ 1

Ի՞նչ է ցույց տալիս ընդհատվող լայն գծի տեսքով գծանշումը:



1. Երթևեկելի մասի և կողմակի միջև առկա սահմանը:
2. Երթևեկելի մասի հիմնական գոտու և թափառքի գոտու միջև առկա սահմանը:
3. Երթևեկելի մասի հիմնական գոտու և արգելակման գոտու միջև առկա սահմանը:

Պատ.՝ 2


Ո՞ր ավտոմոբիլին է թույլատրվում կանգառ կատարել այս նշանների ազդման գոտում:



1. Կարմիրին:
2. Երկու ավտոմոբիլներին էլ:
3. Ոչ մեկին:
4. Դեղինին «Չաշմանդամ» ճանաչման նշանով կահավորված:

Պատ.՝ 4


Ո՞ր նկարում է վարորդը ճիշտ կատարել կանգառ՝ ուղևորներ իջեցնելու համար:



1. Չախ նկարում:
2. Երկու նկարներում էլ:
3. Աջ նկարում:

Պատ.՝ 1

Ո՞ր տրանսպորտային միջոցներին է թույլատրվում կայանումը:



1. Միայն մոտոցիկլին:
2. Միայն բեռնատար ավտոմոբիլին:
3. Միայն թեթև մարդատար ավտոմոբիլին:
4. Թեթև մարդատար ավտոմոբիլին և մոտոցիկլին:
5. Բոլոր տրանսպորտային միջոցներին:

Պատ.՝ 4

Կայանումն արգելվում է՝

1. Կամուրջների, էստակադների և ուղեկամուրջների վրա:
2. Կամուրջների, էստակադների և ուղեկամուրջների տակ:
3. Թվարկած բոլոր դեպքերում:

Պատ.՝ 3

Խումբ N 7 Ճանապարհային գծանշում, կանգառ, կայանում

Թույլատրվում է արդյոք ուղևոր իջեցնել ճանապարհի այն տեղում, որտեղ եզրաքարի վերին մակերեսին գծված է դեղին հոծ գիծ և տեղադրված է «Կանգառն արգելվում է» նշանը:



1. Թույլատրվում է:
2. Արգելվում է:
3. Թույլատրվում է ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների բացակայության դեպքում:
4. Թույլատրվում է միայն ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցներին:

Պատ.՝ 2


Ազդում է արդյոք արգելիչ նշանը ճանապարհի այն հատվածի վրա, որտեղ կանգառ է կատարել վարորդը:



1. Ազդում է:
2. Չի ազդում:

Պատ.՝ 1

Թույլատրվում է արդյոք ավտոմոբիլի կայանումը նշված տեղում:



1. Թույլատրվում է:
2. Արգելվում է:

Պատ.՝ 1

Երկաթուղային գծանցներից ի՞նչ հեռավորության վրա է արգելվում տրանսպորտային միջոցների կայանումը:

1. 300 մ:
2. 150 մ:
3. 100 մ:
4. 50 մ:
5. 25 մ:

Պատ.՝ 5

Թույլատրվում է արդյոք տվյալ դեպքում կանգ առնել ուղևոր իջեցնելու համար:



1. Թույլատրվում է, եթե դա խոչընդոտ չի ստեղծի ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների երթևեկությանը:
2. Արգելվում է:

Պատ.՝ 1

Վարորդներից ո՞րն է պարտավոր կանգ առնել:



1. Թեթև մարդատար ավտոմոբիլի վարորդը:
2. Ավտոբուսի վարորդը:
3. Երկու վարորդն էլ:

Պատ.՝ 1

Խումբ N 7 Ճանապարհային գծանշում, կանգառ, կայանում

Որպես գնացքի կանգառի ազդանշան ծառայում է՝

1. Չեռքի շրջանաձև շարժումը (ցերեկը՝ վառ գույնի լաթով կամ որևէ լավ տեսանելի առարկայով, գիշերը՝ ջահով կամ լապտերով):
2. Սկավառակով կամ կարմիր դրոշակով գլխավերև բարձրացված ձեռքը:
3. Առաջ պարզած ձեռքը:
4. Վեր և վար ճոճվող՝ առաջ պարզած ձեռքը:

Պատ.՝ 1

Բնակավայրերում, յուրաքանչյուր ուղղությամբ մեկ երթևեկելի գոտի ունեցող և մեջտեղում տրամվայի գծեր չունեցող ճանապարհների ծախս կողմում կանգառն ու կայանումը

1. Թույլատրվում է:
2. Արգելվում է:

Պատ.՝ 1

«Կանգ-գծից» կամ «երթևեկությունն առանց կանգառի արգելվում է» նշանից ի՞նչ հեռավորության վրա պետք է կանգնեցվի տրանսպորտային միջոցը՝ մոտեցող գնացքին ճանապարհը զիջելու համար:

1. 1,5 մ:
2. 2,5 մ:
3. 5 մ:
4. 10 մ:
5. Անմիջապես «Կանգ-գծի» և (կամ) նշանի մոտ:

Պատ.՝ 5

Թույլատրվում է արդյոք կանգառը նշված տեղում:



1. Թույլատրվում է:
2. Արգելվում է:

Պատ.՝ 2


Թույլատրվում է արդյոք ավտոմոբիլի կանգառն այս վայրում:



1. Արգելվում է, քանի որ գծանշման ընդհատվող գծի և կանգ առած տրանսպորտային միջոցի միջև հեռավորությունը պակաս է 3 մետրից:
2. Արգելվում է ամսվա զույգ օրերին:
3. Թույլատրվում է:

Պատ.՝ 3

Ո՞ր տրանսպորտային միջոցի վարորդն է խախտել կայանման կանոնները:



1. Կապույտ ավտոմոբիլի վարորդը:
2. Կարմիր ավտոմոբիլի վարորդը:
3. Երկու վարորդներն էլ խախտել են:
4. Երկու վարորդներն էլ չեն խախտել:

Պատ.՝ 3


Խումբ N 7 Ճանապարհային գծանշում, կանգառ, կայանում

Որտե՞ղ է թույլատրվում երկարատև հանգստի, գիշերակացի և այլ նպատակներով կայանելը բնակավայրերից դուրս:

1. Ճանապարհի կողմակներին:
 2. Կայանման համար նախատեսված հրապարակներում կամ ճանապարհի սահմաններից դուրս:
 3. Ճանապարհի երթևեկելի մասի աջ կողմում՝ չխոչընդոտելով այլ տրանսպորտային միջոցների երթևեկությունը:
 4. Ճանապարհի ձախ կողմում՝ ապահովելով ճանապարհային երթևեկության անվտանգությունը:

Պատ.՝ 2

Կանգառն արգելվում է, եթե հոծ գծի և կանգնած տրանսպորտային միջոցի միջև տարածությունը կազմում է՝



1. 6 մ:
 2. 5.5 մ:
 3. 4 մ:
 4. 3.5 մ:
 5. 2.5 մ:

Պատ.՝ 5

Եթե երկաթուղային գծանցով երթևեկությունը արգելված է և բացակայում են լուսացույցը, ճանապարհային նշանները, գծանշումն ու ուղեփակոցը, ապա վարորդը պետք է կանգնի՝

1. Մոտակա ռելսից ոչ պակաս, քան 5 մ հեռավորության վրա:
 2. Մոտակա ռելսից ոչ պակաս, քան 7 մ հեռավորության վրա:
 3. Մոտակա ռելսից ոչ պակաս, քան 10 մ հեռավորության վրա:

Պատ.՝ 3

Ի՞նչ հեռավորության վրա է արգելվում տրանսպորտային միջոցների կայանումը երկաթուղային գծանցներից՝

1. 15 մ:
 2. 50 մ:
 3. 100 մ:
 4. 150 մ:

Պատ.՝ 1


Ո՞ր պատասխանում են ճիշտ թվարկած կանգառի կանոնները խախտած վարորդները:



1. Կարմիր ավտոմոբիլի և մոտոցիկլի վարորդները:
 2. Կապույտ ավտոմոբիլի վարորդը:
 3. Մոտոցիկլի վարորդը:
 4. Բոլոր տրանսպորտային միջոցների վարորդները:

Պատ.՝ 4

Ո՞ր տրանսպորտային միջոցների վարորդներն են սխալ կանգառ կատարել ուղևորներ իջեցնելու համար:



1. Թեթև մարդատար ավտոմոբիլի վարորդը:
 2. Մոտոցիկլի վարորդը:
 3. Ավտոբուսի վարորդը:
 4. Մոտոցիկլի և ավտոբուսի վարորդները:
 5. Բոլոր վարորդները:

Պատ.՝ 4

Խումբ N 7 Ճանապարհային գծանշում, կանգառ, կայանում

Եթե երկաթուղային գծանցով երթևեկությունն արգելված է և բացակայում են լուսացույցը, ճանապարհային նշաններն ու գծանշումը, ապա վարորդը պետք է կանգնի՝

1. Ուղեփակոցից ոչ պակաս, քան 5 մ հեռավորության վրա:
2. Ուղեփակոցից ոչ պակաս, քան 3 մ հեռավորության վրա:
3. Ուղեփակոցից անմիջապես առաջ:

Պատ.՝ 1

Թույլատրվում է զբոսաշրջային ավտոբուսին երթևեկել «A» գծանշումով գոտիով:



1. Արգելվում է:
2. Թույլատրվում է:

Պատ.՝ 1


Ի՞նչ է նշանակում երթևեկելի մասի գոտում գծանշված «A» տառը:



1. Ճանապարհի (երթուղու) համարը:
2. Ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների երթևեկության համար նախատեսված հատուկ գոտի:
3. „A“ կարգի տրանսպորտային միջոցների երթևեկության համար նախատեսված հատուկ գոտի:

Պատ.՝ 2

Տրանսպորտային միջոցին թույլատրվում է կանգնել նշված տեղում ուղևորներ իջեցնելու համար:



1. Թույլատրվում է:
2. Արգելվում է:
3. Թույլատրվում է՝ բայց մայթին բարձրանալով:

Պատ.՝ 2


Թույլատրվում է շարունակել երթևեկությունը սլաքով նշված ուղղությամբ:



1. Արգելվում է:
2. Թույլատրվում է բոլոր դեպքերում:
3. Թույլատրվում է ուղևորներ իջեցնելու նպատակով կանգառ կատարելու համար:
4. Թույլատրվում է բեռնատար ավտոմոբիլին վազանցելու նպատակով:

Պատ.՝ 3

Այսպիսի ուղղաձիգ գծանշմամբ նշվում են՝



1. Կանրջի, թունելի ստորին եզրերը:
2. Չլուսավորված թունելների մուտքը:
3. Ճանապարհային շինությունների ցանկացած տարր, որը վտանգ է ստեղծում երթևեկության համար:

Պատ.՝ 1

խումբ N 7 ճանապարհային գծանշում, կանգառ, կայանում

Ինչպե՞ս պետք է վարվի թե՛ մարդատար ավտոմոբիլի վարորդը, եթե ավտոբուսի վարորդը սկսել է արգելակել:



1. Շարունակի երթևեկությունը:
2. Դանդաղեցնի ընթացքը, անհրաժեշտության դեպքում կանգնի և շարունակի երթևեկությունը՝ համոզվելով, որ անցումում հետիոտներ չկան:
3. Կանգ առնի և շարունակի երթևեկությունը միայն այն դեպքում, երբ ավտոբուսը կվերսկսի երթևեկությունը:

Պատ.՝ 2

Ավտոբուսի վարորդը կատարել է կանգառ ուղևորներ նստեցնելու նպատակով: Թե՛ մարդատար ավտոմոբիլը երթևեկում է 70 կմ/ժ արագությամբ: Ո՞ր տրանսպորտային միջոցի վարորդը է խախտում ճանապարհային երթևեկության կանոնների պահանջները:



1. Ոչ ոք:
2. Ավտոբուսի վարորդը:
3. Թե՛ մարդատար ավտոմոբիլի վարորդը:
4. Երկու վարորդներն էլ:

Պատ.՝ 1

Թվարկվածներից ո՞ր դեպքում կարող է ավտոբուսի վարորդն անցնել երկկողմ երթևեկության եռագոտի ճանապարհի մեջտեղի գոտի, որը օգտագործվում է երկու ուղղությամբ երթևեկության համար:



1. Վազանցելու կամ շրջանցելու նպատակով:
2. Չախ շրջադարձ կամ հետադարձ կատարելու նպատակով:
3. Վերոնշյալ երկու դեպքում էլ:
4. Ոչ մի պատասխանը ճիշտ չէ:

Պատ.՝ 3

Որտե՞ղ պետք է կանգ առնի վարորդը տվյալ իրավիճակում:



1. Կանգառը պարտադիր չէ:
2. Լուսացույցի առջև:
3. «Կանգ-գիծ» գծանշման առջև:
4. Երթևեկելի գոտիների հատման առջև:

Պատ.՝ 3

Ավտոբուսը կանգ է առել հետիոտնին զիջելու համար: Թե՛ մարդատար ավտոմոբիլի վարորդը տվյալ իրադրությունում խախտում է ճանապարհային երթևեկության կանոնների պահանջները:



1. Խախտում է:
2. Չի խախտում:

Պատ.՝ 1

Թույլատրվո՞ւմ է, կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող ավտոբուսի վարորդին ուղևորներ նստեցնելու նպատակով կանգառ կատարել նշված վայրում:



1. Արգելվում է:
2. Թույլատրվում է:

Պատ.՝ 1

Խուճը N 7 Ճանապարհային գծանշում, կանգառ, կայանում

Զբոսաշրջային ավտոբուսի վարորդը երկարատև հանգստի նպատակով իրավունք ունի՞ կանգ առնել՝ նշված վայրում:



1. Իրավունք չունի:
2. Իրավունք ունի:

Պատ.՝ 1

Դեպի ծախ երթևեկությունը շարունակելու համար որտե՞ղ պետք է կանգ առնի ավտոբուսի վարորդը ճանապարհը թեթև մարդատար ավտոմոբիլին զիջելու համար:



1. Ճանապարհային նշանի առջև:
2. Գծանշման մոտ:
3. Վարորդի հայեցողությամբ անվտանգ տեղում:

Պատ.՝ 2

Տվյալ իրավիճակում որտե՞ղ պետք է կանգ առնել:



1. Առաջին ճանապարհային նշանի մոտ:
2. «Կանգ-գիծ» գծանշման առջև:
3. Երկրորդ ճանապարհային նշանի մոտ:
4. Կանգառը պարտադիր չէ:

Պատ.՝ 2

Տվյալ նշանի ազդեցության գոտում ո՞ր տրանսպորտային միջոցներին է թույլատրվում կանգառ կատարել:



1. Միայն ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցներին:
2. Միայն հաշմանդամների կողմից ղեկավարվող տրանսպորտային միջոցներին:
3. Միայն միացված հաշվիչով տաքսիներին:
4. Բոլորին արգելվում է:

Պատ.՝ 4


Նշված ճանապարհային նշանների ազդման գոտում թույլատրվում է կանգառ կատարել, ուղևորներ նստեցնելու նպատակով:



1. Թույլատրվում է:
2. Արգելվում է:

Պատ.՝ 1

Տվյալ ճանապարհային գծանշումը թույլատրում է երթևեկել՝



1. Միայն դեպի ծախ:
2. Դեպի ծախ և հակառակ ուղղությամբ:
3. Միայն հակառակ ուղղությամբ:
4. Ուղիղ, ծախ և հակառակ ուղղությամբ:

Պատ.՝ 2

Խուճը N 7 Ճանապարհային գծանշում, կանգառ, կայանում

Ո՞ր տրանսպորտային միջոցներին է թույլատրվում կայանել տվյալ ճանապարհային նշանի ազդեցության գոտում:



1. Միայն ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցներին:
2. Տրանսպորտային միջոցներին, որոնք վարում են հաշմանդամները և միացված հաշվիչով տաքսիներին:

Պատ.՝ 2

Ի՞նչ է նշանակում տվյալ ճանապարհային գծանշումը:



1. Ուղևորներ նստեցնելու-իջեցնելու տեղ:
2. Ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների կանգառի կետ:
3. Ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների կանգառի և տաքսիների կայանման տեղ:

Պատ.՝ 2

Ո՞ր տրանսպորտային միջոցների համար է առանձնացված «A» տառով գծանշված գոտին:



1. Միայն ավտոբուսների համար, որոնք շարժվում են սահմանված երթուղով:
2. Տրոլեյբուսների և տաքսիների համար:
3. Ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների համար:

Պատ.՝ 3

Թույլատրվում է ավտոբուսների կանգառն ու կայանումը բնակավայրերում երթևեկելի մասի ձախ կողմում՝ միակողմ երթևեկության ճանապարհներին:

1. Թույլատրվում է:
2. Արգելվում է:
3. Թույլատրվում է միայն կանգառ կատարելու համար:

Պատ.՝ 1

Կանգառի կետերի տարածքից դուրս թույլատրվում է ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցներին կանգառ կատարել:

1. Արգելվում է:
2. Թույլատրվում է:

Պատ.՝ 1

Թույլատրվում է ավտոբուսների կայանումը բնակելի գոտիներում և բակային տարածքներում:

1. Արգելվում է:
2. Թույլատրվում է՝ դրա համար նախատեսված տեղերում:
3. Թույլատրվում է:

Պատ.՝ 2